

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Բուժաշխատողի օրվա կապակցությամբ

17.06.2016



Հարգելի բուժաշխատողներ:

Ձերմոտեն շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի կապակցությամբ:

Բժշկի մասնագիտությունն ամենամարդասիրական մասնագիտությունն է, քանզի բժիկն է իրականացնում մարդու առողջության պահպանման կարևորագույն գործը: Բժիշկն է կյանք պարգևում մարդկանց, ապահովելով լույս աշխարհ եկող մանուկների ու նրանց լույս աշխարհ բերող մայրերի կայուն առողջությունը: Յուրաքանչյուր անձ աշխարհ գալու իր առաջին ճիշն արձակում է ուղղակիորեն բժշկի հոգատար ավերի մեջ:

Միտով ու ևս մեկ անհրաժեշտ անգամ ուզում եմ ասել, որ Ձեր գործունեությունն արժանի է բարձր գնահատանքի: Ուստի Բուժաշխատողի օրվան նվիրված տոնն առիթ է

շնորհակալություն ասելու և Ձեզ նույնպես ամուր առողջություն մաղթելու համար:

Վայոց ձորի մարզի հարգելի բուժաշխատողներ, համոզված եմ, որ Դուք անելու եք հնարավոր ամեն բան, մեր մարզի ազգաբնակչության բուժսպասարկումը պատշաճորեն իրականացնելու, ինչպես նաև սպասարկման ծառայությունների որակը շարունակական կերպով բարելավելու նպատակով:

Մարզային իշխանություններն էլ իրենց հերթին, օգտվելով ՀՀ կառավարության կողմից նախանշված՝ առողջապահության բնագավառում տեղի ունեցող բարեփոխումների ծրագրի ընձեռած հնարավորություններից, կձեռնարկեն հնարավորը ամեն քայլ՝ Վայոց ձորի մարզային առողջապահական կազմակերպությունները վերազինելու համար, ինչի վառ ապացույցը հունիսի 6-ից Վայքի ԲՄ-ում հիմնդրադրված ծառայության բաժանմունքի գործարկումն է:

Հարգելիներս, կրկին շնորհավորում եմ Ձեզ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ և մաղթում եմ աշխատանքային հաջողություններ:

Շնորհակալություն Ձեզ, ամենաշնորհակալ Ձեր գործունեության համար: